

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Հունաստանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետև՝ Կողմեր, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հունաստանի Հանրապետության ազգային պաշտպանության նախարարության միջև ռազմական համագործակցության վերաբերյալ 2011 թվականի հունվարի 19-ին ստորագրված համաձայնագրով, գործելով գործընկերության և համագործակցության ոգով, պաշտպանության բնագավառում լավ հարաբերությունների զարգացման ցանկությամբ, նպատակ ունենալով ամրապնդելու փոխադարձ հարգանքը, վստահությունն ու ըմբռնումը, ցանկանալով ապահովել հավասարության և փոխադարձ հարգանքի վրա հիմնված ռազմատեխնիկական համագործակցության պատշաճ պայմաններ, համաձայնեցին հետևյալի մասին.

**ՀՈՂՎԱԾ 1  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ**

Կողմերը, սույն Համաձայնագրի դրույթներին, իրենց պետությունների ներպետական օրենսդրությանը և միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան, կհամագործակցեն ռազմատեխնիկական բնագավառում:

**ՀՈՂՎԱԾ 2  
ՆՊԱՏԱԿԸ**

Սույն Համաձայնագրի նպատակներով պաշտպանական կարողություններն ուժեղացնելու համար Կողմերը, առկա ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելով, սովորական պաշտպանական տեխնոլոգիաների ոլորտում կհաստատեն համագործակցության ընթացակարգ սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածում նշված հայ-հունական Համատեղ հանձնաժողովի միջոցով: Այդ նպատակով և պաշտպանական արդյունաբերության ոլորտի հնարավորություններն ընդլայնելու համար Կողմերը ջանքեր կգործադրեն՝

խթանելու նոր տեխնոլոգիաների և ռազմական նշանակության ապրանքների հետազոտության, զարգացման և արտադրության ոլորտներում համագործակցությունը՝ իրենց ներպետական օրենսդրությանը համապատասխան:

### **ՀՈՂՎԱԾ 3 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ**

Կողմերի համագործակցությունը կներառի հետևյալ ոլորտները.

1) զենք, ռազմամթերք և պայթուցիկ նյութեր արտադրելու նպատակով տեխնոլոգիաների փոխանցում և տեխնիկական աջակցություն,

2) պաշտպանության ոլորտում Կողմերի լիազորված մարմինների փոխգործակցություն՝ ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպությունների միջև շահերի համադրման և նրանց միջև արդյունավետ համագործակցության ապահովման, կոոպերացիոն և ինտեգրացիոն համագործակցության և կայուն գործունեության զարգացման համար,

3) ռազմական հետազոտության և զննահատման ոլորտներում փորձի փոխանակում,

4) ռազմամթերքի արտադրության ոլորտում տեղեկատվության և փորձի փոխանակում,

5) ռազմական նշանակության ապրանքների և դրանց արտադրության ոլորտում հետազոտությունների իրականացում,

6) ռազմական նշանակության ապրանքների արտադրության նպատակով համատեղ կազմակերպությունների հիմնում,

7) ռազմարդյունաբերական ոլորտում մասնագիտական կրթության, վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրերի իրականացում Կողմերի ռազմական ուսումնական առաջատար հաստատություններում,

8) բացի սույն հոդվածում նշվածներից՝ այլ ոլորտներ՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

### **ՀՈՂՎԱԾ 4 ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**



Կողմերը համաձայնում են, որ մտավոր սեփականության իրավունքների փոխադարձ պաշտպանությունը կսահմանվի սույն Համաձայնագրի համագործակցության ոլորտներին վերաբերող՝ հետագայում կնքվելիք որևէ համաձայնագրով կամ պայմանագրով:

## ՀՈԴՎԱԾ 5

### ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսված համագործակցությունը կիրականացվի հետևյալ միջոցներով.

1) փորձի և տեղեկատվության փոխանակում ռազմական նշանակության ապրանքների մշակման, արտադրության և փորձարկման վերաբերյալ,

2) Հայաստանի Հանրապետությունում և Հունաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության ապրանքների հետազոտություն և մշակում, ինչպես նաև աշխատանքների ընդլայնում և փորձարկում,

3) ռազմարդյունաբերական ոլորտի մասնագետների վերապատրաստում՝ ըստ Կողմերի կարիքների և կարողությունների,

4) երրորդ երկրներում արտադրված ռազմական նշանակության ապրանքների նորոգման ու շահագործման հետ կապված ծառայությունների մատուցում:

## ՀՈԴՎԱԾ 6

### ԻՐԱԿԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Սույն Համաձայնագրի դրույթների իրականացման համար իրավասու մարմիններն են.

#### **Հայկական Կողմի համար՝**

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը,

#### **Հունական Կողմի համար՝**

Հունաստանի Հանրապետության ազգային պաշտպանության նախարարության պաշտպանական ներդրումների և սպառազինությունների գլխավոր տնօրինությունը (ՊՆՍԳՏ):

2. Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց կձանուցեն իրավասու մարմինների ցանկացած փոփոխության մասին:

## **ՀՈՂՎԱԾ 7**

### **ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Կողմերը կձեռնարկեն բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ կանխելու համար սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում ձեռք բերված գաղտնի տեղեկատվության բացահայտումը երրորդ կողմերի համար:

2. Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումից հետո ցանկացած գաղտնի տեղեկատվություն կշարունակի պաշտպանված մնալ Կողմերի ներպետական օրենսդրության համապատասխան, մինչև այն փոխանցող Կողմը մյուս Կողմին ազատի նման պարտավորությունից:

## **ՀՈՂՎԱԾ 8**

### **ՎԱՃԱՌՔ ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԵՐԻՆ**

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում երրորդ կողմերին համատեղ աշխատանքի արդյունքների և սարքավորումների վաճառքն իրականացնելու համար կպահանջվի երկու Կողմերի նախապես տրված գրավոր համաձայնությունը:

2. Սույն Համաձայնագրի շրջանակներում համատեղ աշխատանքի արդյունքների և սարքավորումների արտադրության նպատակով թույլտվություն տրամադրելու համար պահանջվում է երկու Կողմերի նախնական գրավոր համաձայնությունը:

3. Սույն Համաձայնագրի շրջանակներում համատեղ աշխատանքի արդյունքների և սարքավորումների՝ երրորդ կողմերին հասանելիությունը կկարգավորվի առանձին համաձայնագրերով:

## **ՀՈՂՎԱԾ 9**

### **ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

1. Սույն Համաձայնագիրն իրականացնելու և համագործակցությունը ղյուրացնելու նպատակով կստեղծվի Համատեղ հանձնաժողով, որը կկազմվի Կողմերի հավասար թվով ներկայացուցիչներից:

2. Համատեղ հանձնաժողովը գնահատում է սույն Համաձայնագրի իրականացումը, ներկայացնում ռազմատեխնիկական համագործակցության



հետագա զարգացմանն ուղղված առաջարկություններ, սահմանում համագործակցության գերակայությունները, նախապատրաստում ու հաստատում աշխատանքային ժամանակացույցը:

3. Համատեղ հանձնաժողովի նիստերը գումարվում են հաջորդաբար Հայաստանի Հանրապետությունում և Հունաստանի Հանրապետությունում: Ընդունող կողմը հոգում է հանձնաժողովի նիստի գումարման հետ կապված բոլոր կազմակերպչական ծախսերը, ինչպես նաև մյուս Կողմի անդամների կեցության և սննդի հետ կապված ծախսերը իր պետության տարածքում գտնվելիս:

4. Համատեղ հանձնաժողովը առաջին նիստի ընթացքում սահմանում է իր ընթացակարգի կանոնները և աշխատանքային ժամանակացույցը:

## **ՀՈԴՎԱԾ 10**

### **ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

Սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում Կողմերի միջև ծագած ցանկացած տարաձայնություն կկարգավորվի խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

## **ՀՈԴՎԱԾ 11**

### **ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց գրավոր կձանուցեն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտի մասին: Ուժի մեջ մտնելու ամսաթիվը կլինի վերջին ձանուցումն ստանալու օրը:


2. Սույն Համաձայնագրում Կողմերը փոխադարձ գրավոր համաձայնությամբ կարող են կատարել փոփոխություններ: Նման փոփոխությունները ձևակերպվում են առանձին արձանագրություններով, ուժի մեջ են մտնում վերը նշված 1-ին կետով սահմանված կարգով և համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Դրա գործողությունը կարող է դադարեցնել Կողմերից յուրաքանչյուրը՝ մյուս Կողմին առնվազն վեց ամիս առաջ այն դադարեցնելու մտադրության մասին գրավոր ձանուցում ուղարկելով:

4. Սույն Համաձայնագրի դրույթները չեն ազդում Կողմերի՝ այլ միջազգային համաձայնագրերից բխող իրավունքների և պարտավորությունների վրա:

Կատարված է Աթենք քաղաքում 2023 թվականի դեկտեմբերի 14 -ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, հունարեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնության դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝**



**ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝**



M O D  
Nikos Dendias



**AGREEMENT**  
**BETWEEN THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA**  
**AND THE GOVERNMENT OF THE HELLENIC REPUBLIC**  
**ON MILITARY-TECHNICAL COOPERATION**

The Government of the Republic of Armenia and the Government of the the Hellenic Republic, hereinafter referred to as the Parties;

Guided by the Agreement between the Ministry of Defense of the Republic of Armenia and the National Defense of the Hellenic Republic on military cooperation, signed on 19<sup>th</sup> January, 2011,

Acting in the spirit of partnership and cooperation with a wish to develop good relations in the field of defense, in order to enhance mutual esteem, confidence and understanding,

Willing to ensure proper conditions for military-technical cooperation based on equality and mutual respect,

have agreed as follows:

**ARTICLE 1**  
**SCOPE OF THE AGREEMENT**

The Parties shall cooperate in the military-technical sphere in accordance with the provisions of this Agreement, their national legislation and the established principles and norms of international law.

**ARTICLE 2**  
**PURPOSE**

For the purpose of this Agreement, the Parties shall establish a procedure for cooperation in the field of conventional defense technology through the Armenian - Hellenic Joint Commission referred to in Article 9 of this Agreement, in order to strengthen defense capability, through a better use of existing resources. For that purpose and with a view of enhancing the opportunities of defense industry, the Parties will undertake efforts to promote cooperation in research and development, manufacturing in the spheres of new technologies and military purpose products, in accordance with their national legislation.

### **ARTICLE 3 AREAS OF COOPERATION**

The cooperation between the Parties will include the following areas:

- 1) technology transfer and technical support for the purpose of manufacturing arms, ammunitions and explosives;
- 2) cooperation between the Parties authorized bodies in the field of defense for the purpose of combining interests between the organizations of the military-industrial complex and ensuring effective cooperation between them, developing cooperative and integrative cooperation and sustainable activities;
- 3) cooperation concerning experience exchange in the sphere of military research and assessment;
- 4) information, experience exchange on ammunitions production;
- 5) research in the field of military purpose products and their manufacturing;
- 6) establishment of joint organizations for producing military purpose products;
- 7) implementation of professional education, training and qualification improvement programs in the military-industrial sector in the leading military training organizations of the Parties;
- 8) other areas than those mentioned in this Article upon mutual agreement of the Parties.

### **ARTICLE 4 MUTUAL PROTECTION OF INTELLECTUAL PROPERTY**

The Parties agree that mutual protection of the intellectual property rights shall be specified in any future agreement or contract concerning the areas of cooperation of this Agreement.

### **ARTICLE 5 MEANS OF COOPERATION**

The cooperation described in Article 2 of this Agreement will be ensured by the following means:

- 1) experience and information exchange on development, manufacturing and testing of military purpose products;



- 2) research and development of military purpose products in the Republic of Armenia and in the Hellenic Republic, as well as extending and testing of works;
- 3) training of military industrial specialists according to the needs and capabilities of the Parties;
- 4) providing services concerning the repair and operation of military purpose products manufactured in third countries.

## **ARTICLE 6 COMPETENT AUTHORITIES**

1. The Competent Authorities for implementation of the provisions of this Agreement are:

**For the Armenian Party**

The Ministry of Defense of the Republic of Armenia.

**For the Greek Party**

The General Directorate for Defense Investment and Armaments (GDDIA) of the Ministry of National Defense of the Hellenic Republic.

2. The Parties will inform each other, through diplomatic channels, of any changes of the Competent Authorities.

## **ARTICLE 7 PROTECTION OF CLASSIFIED INFORMATION**

1. The Parties shall take all necessary actions to prevent any disclosure of classified information obtained during the implementation of this Agreement to third parties.

2. After the termination of this Agreement, any classified information will continue to be protected in accordance with the national legislation of the Parties, until the transmitting Party dispenses the other Party from such obligation.

## **ARTICLE 8 SALE TO THIRD PARTIES**

1. The sale of joint work results and equipment under this Agreement to third parties shall require prior written consent of both Parties.

2. Granting licenses for manufacturing of the joint work results and equipment under this Agreement shall require prior written consent of both Parties.

3. Third parties' access to the joint work results and equipment under this Agreement shall be governed by separate agreements.

## **ARTICLE 9 JOINT COMMISSION**

1. In order to implement this Agreement and facilitate cooperation, a Joint Commission is established, consisting of an equal number of representatives of the Parties.

2. The Joint Commission shall assess the implementation of this Agreement, make proposals aimed at further development of military-technical cooperation, determine the priorities of cooperation, prepare and approve work schedule.

3. The Joint Commission will hold meetings alternately in the Republic of Armenia and in the Hellenic Republic. The receiving Party will bear all the costs concerning the organizational matters of the session, as well as accommodation and meals of the members of the other Party in the territory of the receiving Party.

4. The Joint Commission will determine its rules of procedure and work schedule during the first session.

## **ARTICLE 10 SETTLEMENT OF DISPUTES**

Any disagreement concerning the implementation of this Agreement between the Parties will be settled through consultations and negotiations.

## **ARTICLE 11 FINAL PROVISIONS**

1. This Agreement shall enter into force on the date on which the Parties have informed each other, in writing through diplomatic channels, that their internal procedures required for its entry into force have been completed. The relevant date shall be the day on which the last communication is received.

2. The Parties may make amendments to this Agreement upon mutual written consent. Such amendments are formulated in separate protocols, shall enter into force in accordance with paragraph 1 above and become an integral part of Agreement.



3. This Agreement is concluded for an indefinite period of time. It may be terminated by either Party by giving six months prior written notification on such an intention to terminate it.


4. The provisions of this Agreement shall not affect the rights and obligations of the Parties deriving from other international agreements.

Done in Athens on 14 of December 2023 in two originals, each in Armenian, Greek and English, all texts being equally authentic. In the case of any divergence in the interpretation, the English text shall prevail.

**FOR THE GOVERNMENT OF THE  
REPUBLIC OF ARMENIA**



**FOR THE GOVERNMENT OF THE  
HELLENIC REPUBLIC**



M. D.  
Nikos Dendias

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2023 թվականի դեկտեմբերի 14-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահուցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարության  
միջազգային պայմանագրերի և  
իրավունքի վարչության պետ**



*Սեդիկ Սարոյան*  
**Սեդիկ Սարոյան**